



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԾԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL
LIBRARY
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է
Հայաստանի ազգային գրադարանի
թվային շտեմարաններում՝ համաձայն
դրա իրավատիրոջ հետ կնքած
Համագործակցության պայմանագրի, և
կարող է օգտագործվել բացառապես
օրենքով նախատեսված կարգով՝
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ
հեղինակային իրավունքները**

Մ. ՀԱՅԿԵՆՑ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

ԻՐԱՒ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՐԹՈՒԹԻՒՆ

ՆԻՒ ՃԸՐԶԻ

2025

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ
ԻՐԱԲ ԱՌԱՋՆՈՐԴԸ
ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՐԹՈՒԹԻՒՆ

Կողքին՝ Տիգրան Երկաթի ուրուանկարը:

Մ. ՀԱՅԿԵՆՑ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

ԻՐԱԲԱՆԱԳՆՈՐԴԸ

ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՐԹՈՒԹԻՒՆ

ՆԻՒ ԵՐԵՎԱՆ

2025

Բովանդակություն

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

ՄԱՐԴ, ՄԻՋԱՎԱՅՐ, ՄԵԾՈՒԹԻՒՆ 7

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԻՐԱՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԸ ԿԵԱՆՔԵՆ 21

ԽՈՅԱՆՔ, ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՐԹՈՒԹԵԱՆ

ԱՐԻՒՆԱԹԱԹԱԽ ՏԱՐԻՆԵՐ 33

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

ՄԱՐԴ, ՄԻՋԱՎԱՅՐ, ՄԵԾՈՒԹԻՒՆ

Մ. ՀԱՅԿԵԼՑ

Այսօր, աշխարհի չորս ծագերուն, Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան եւ անոր ձեռակերտ Հայ Ուսանողական Միութեան հաւատաւոր անդամներ, իրենց ութսուն եւ անլի տարիները մոռցած, զաւակներու թերեւս նաեւ թոռներու հետ հպարտութեամբ եւ պայծառ միտքով կը յիշեն հրաշագեղ գործը բոլորովին անծանօթի մը, որուն բուն անունը չեն գիտեր բայց հիմա պիտի լսեն առաջին անգամ ըլլալով:

Կարապետ «Կարա» Պիլեզիկնի ծնած Էր Պոլսոյ Բերայի Փոլոնիական փողոցին վրայ գտնուող ընտանեկան բնակարանը Փետրուար 4, 1870 ին, հայ կաթոլիկ ծնողքէ: Հայրը՝ Գրիգոր Պիլեզիկնի, իր առատաձեռնութեամբ գնահատուած անձ մը, մեռաւ 27 տարեկանին: Մայրը՝ Մարի, զարգացած հայուհի մը Թընկըր գերդաստանէն, կը ստանձնէ Կարա (ին) եւ

միւս երկու որդիներուն ամբողջական հոգատարութիւնը:

Փոքրիկն Կարա կանուխէն Փարիզ կը դրկուի ուսման: Արթուն է եւ յառաջադէմ: Կը հմտանայ ֆրանսական գրականութեան մէջ, կը ծանօթանայ գրագէտներուն, մտաւորականներուն եւ քաղաքական գործիչներուն: Իրեն համար ֆրանսական Յեղափոխութիւնը նախատիպն է բոլոր յեղափոխութեանց: Վենետիկի Միսիթարեանց մօտ կը սերտէ հայոց պատմութիւն: Խանդավառ է Յունաստանի արուեստներով, մշակոյթով, պատմութեամբ, քաջագործութիւններով: Յոյն մտաւորականներն ու քաղաքական գործիչներն ալ հմայուած են այս հրաշալի հայ ճարտասանով:

8 |

Գիտնալով որ պատրիարքարանը որջ էր Կարմիր Սուլթանի լրտեսներուն, գաղտնաբար կը խորհրդակցի երկաթէ Պատրիարքին՝ Մատթէոս Արք. Իզմիրլեանի հետ: Իր երկար ուսումնասիրութիւնները, անքուն եւ անօթի՝ գիշերային խոկումները զինք բերած են Հայ Դատի իսկական յեղափոխական լուծումին, որ տարբեր է մինչ այդ հայ յեղափոխական խումբերուն հետապնդածէն: Հայ ժողովուրդը պետք է դաշնակիցներ ունենար: Թէեւ Յունաստան գտած էր իր անկախութիւնը թրքական լուծէն, բայց դեռ ունի գաւառներ թրքական կրունկի տակ: Ահա՛ Հայաստանի եւ Կիլիկիոյ ազատագրութեան ուղին—Յունաստանի եւ Հայաստանի Դաշինք ընդդէմ Օսմանեան Կայսրութեան: Կարապետ անունը կամ մօր փաղաքշական «Կարա»ն վայելչ էր իր նոր առաքելութեան:

Պոլիս Է: Մայր, կը կանչէ ան պատմական օր մը, դուն հիմա մայրն ես Տիգրան Երկաթին: Ծնած էր Նոր յեղափոխականը Նոր անունով մը, որ իր ստեղծածն էր Ներշնչուած Հայոց Ազգային Պատմութենէն: Իրը ըրած էր Արշակունի Մեծն Տիգրանի Տիգրանը եւ Բագրատունի Աշոտ Երկաթի Երկաթը:

Երկրի վրայ շատ կարճ տեւեց Տիգրան Երկաթի կեանքը: Աչքերը փակեց 1899 Նոյեմբերին: 29 տարեկան էր: Մեռաւ եւ թաղուեցաւ Պոլիս: Ապրեցաւ Աղեքսանդրիա եւ անմահացաւ Մեծն Աղեքսանդրի նման: Մեծն Չօպանեան **Անահիտի** Նոյն ամսուան թիւին մէջ յուզումով կը նկարագրէ բարեկամներու օժանդակութեամբ Յունաստանի հիւանդանոցէն հալումաշ երիտասարդին Պոլիս վերադարձը քանի մը օրէն յանձնուելու համար յաւիտենութեան: Գրագետը Նոյն Էջերուն մէջ կաթողիկէ Տիգրան Երկաթին համար, ի տարբերութիւն ժամանակի դաւանակիցներէն, Մկրտիչ Պէշիկթաշլեանին հետ վերապահած է ազգայնութեան գահը:

| 9

Մահէն երկու տարի ետք Աղեքսանդրիոյ Ազգայնական Ակումբին հիմնադիրները հրաւիրեցին տիկին Մարի Պիլեգիկճին, որ սեւեր հագած Նախագահեց սգահանդեսին: Ահա 121 տարի Է Տիգրան Երկաթը կ'ապրի իր հարազատ տան մէջ դալարագեղ սերունդներու ազգային ծառայութեան մշտադալար սուրբ ուխտին հաւատարիմ:

Մարդը դարձաւ Ակումբ, Սրահ եւ Տուն: Եւ մենք այդ տունէն դուրս պիտի չգայինք եթէ մեր հայրերը

արտօնէին անկողինը Տիգրան Երկաթ բերել: Կը յիշեմ Նէպի Տանիէլ փողոցի պալատը—Մատենադարան, իշխանավայել հիւրանոց, դասախօսութեանց սրահ, Ուսանողական Մարմնի ընդարձակ գրասենեակ, սիւնազարդ հանդիսասրահ, բեմ, բեմական իրերու սենեակ—զոր ձեռք բերած էր Հայ Ազգային Հիմնադրամը, որուն հիմնադիրը ինք ալ ներշնչեալ աշակերտ մը եղած էր հանգուցեալ հերոսին:

Այս շքեղութիւնը Տիգրան Երկաթին պարգեւողը ծնած էր 1887ին Իզմիր ազգանուէր ընտանիքի շառաւիղ հօրմէ եւ գերմանուհի մօրմէ, որ ընտանիքին ինքնութեան պահպանումը կեանքին նպատակ ըրած էր: 1895ին կը հաստատուին Աղեքսանդրիա: Եղբայրն ու ինք կը յաճախեն Պօղոսեան Ազգային Վարժարան եւ դպիր են Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին: Չոյգ փառաւոր հաստատութիւնները բարձրացած են դէմ առ դէմ ընդարձակ հողամասի մը վրայ զոր արժանեաց համար աչքին կտրած չափով արքունիքէն նուէր ստացած էր Եգիպտոսի Առեւտուրի Նախարար Պօղոս Պէյ Եուսուֆեանը եւ իր կարգին ամբողջը նուիրած ազգին: Ապառօշակիր այս բացառիկ Հայը անծանօթ կը մնայ հայութեան զանգուածին: Իր կենդանութեան ոչինչ պահանջած է իրեն կամ իրեններուն համար: Բայց տարին անգամ մը եկեղեցւոյ կողքին բարձրացած մարմարակերտ մատուռանման դամբարանէն կը գոհանայ լսելով Պօղոսեանի շնորհալի աշակերտներէն ՆարՊէյի «**Հայ Ապրիւնք**»ը եւ վեհական «**Տէր, կեցո՛ր դու զհայս եւ արա զնոսա պայծառս: Չողորմութիւնդ վերին հաճեա ձօնել նոցին զի նովիմքք մարթասցուք ապրիլ**

յաստիս... յաստիս...»

Իզմիր ծնած բարերարը 1905 ին կը միանայ Աղեքսանդրիոյ ազգայնական ակումբին: Երաժշտագետ է եւ Տիգրան Երկաթը կը շէնցնէ երգահանդեսներով եւ նուագահանդեսներով: Ձեռներեց առաջնորդը մեծ վաստակ ունեցած է Եգիպտոս, Սուրիա, Լիբանան, Ֆրանսա, Անգլիա, Պաղեստին, Պարսկաստան: Ձեռը գիտեր երիտասարդներուն զգացնելու իրենց պարտականութիւնը: Կ'ենթադրուի որ սկզբնապէս Թեքէեան եւ Տամատեան թաղուած են ղպտոց Մարմինա (Սուրբ Միկաս) գերեզմանատունը, Գահիրէ, ապա փոխադրուած Յելիոպոլսոյ Ազգ. Գերեզմանատունը ուր տեղադրուեցան երկուքին կիսանդրիները գործ՝ արուեստագետ ընկերուհի Այծեմիկ Պոյաճեանի: Աղեքսանդրիոյ պատգամաւորը կիսանդրիներէն վերցուց սգոյ քօղը եւ ներկաները քալեցին դէպի գերեզմանատան ելքի դուռը: «Ո՛չ փող զարկինք, ո՛չ արծազանգ լեռնասոյգ...»: Դրան մօտ ձեռք մը բռնեց երիտասարդին թեւը: Կը սպասէի որ դամբանական ճառ մը խօսէիք, ըսաւ մեծավաստակ առաջնորդը: Ան յանկարծամահ եղաւ 1963ին տան մէջ, Գահիրէ, բայց 1965ին Փիքօ Պուլըվարտի (Լոս Անճելըս) ազգայնական ակումբը, որ այն բախտաւոր օրերուն կը վիստար շարքայիներով, միահամուռ որոշումով ակումբը մկրտեց **ԷՕԺԷՆ ԲԱԲԱՉԵԱՆ**:

| 11

Քիչեր գիտէին որ Տիգրան Երկաթը ուներ նաեւ վերնատուն մը, ուր կը պահուէին **Արեւ** օրաթերթին քառասուն տարուան թիւերուն սեւ կողքով կազմուած զանգուածեղ հատորները, որոնք կը գտնուէին

խափշիկ սպասաւոր Սոլիմանի հսկողութեան տակ եւ պարբերաբար կը յանձնուէին Ուսանողականի սենեակը ուր դեռահաս երիտասարդ մը կը սերտեր իր ժողովուրդին կեանքը:

1956ը քառասնամեակն էր Հայ Ուսանողական Միութեան: Յորելեանական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Տիգրան Երկաթի հանդիսասրահին մէջ Կիրակի 19 Մայիս 1957ին հովանաւորութեամբ թեմին Առաջնորդ Տ. Մամբրէ Արք. Սիրունեանի եւ Նախագահութեամբ Հիմնադիր Անդամ Աղասի Իփեքեանի, որուն հարազատները տասնամեակներ Հայ Բեմն ու Հայ Լեզուն ծաղկեցուցին ծագէ ծագ: Քառասնամեակի կարկանդակը կտրեց Աղեքսանդրիոյ Ազգային Քաղաքական Ժողովոյ Ատենապետ Մարտիկ Չարպիսեան, զոր իշխանութիւններն ու համայնքները կը ճանչնային իբրեւ *Président de la Communauté Arménienne*:

Տաղանդաւոր ուժեր գործադրեցին գեղարուեստական յայտագիրը: Գլխաւոր բանախօսն էր Գահիրէ-Էն յատկապէս հրաւիրուած ականաւոր պատմաբան բարտիհասակ Արշակ Ալպոյաճեան, որ նաեւ **Արեւի** Հինգշաբթի 30 Մայիս 1957ի թիւով հրատարակած էր ձեռնարկէն իր կրած տպաւորութիւնը **ԱՆԱԿՆԿԱԼ ՄԸ ԵՒ ԽՐԱԿՆՈՒՄԻՉ ՕՐԻՆԱԿ ՄԸ** խորագրին տակ.

...քառասնամեայ յորելեանական հանդիսութիւնը հաճելի անակնկալ մը եղաւ ինձի համար: ...Ներկայ խոռոն բազմութեան մէջ թերեւս հազիւ հինգ-վեց Գահիրէաբնակներ կայինք եւ ամենքս ալ զարմանքով

ու հիացումով ականջալուր եղանք մասնաւորաբար շատ ուշագրաւ երկու բանախօսութիւններու, որոնք հանդէսին մէջ ըրին վարչութեան Ատենապետ[ը] եւ անդամ[ը], վասնզի այս պատրաստութեամբ եւ այս խմորով երիտասարդներ շատ քիչ ունինք դժբախտաբար: Այս երկու շնորհ ունեցող երիտասարդները ցոյց տուին հասուն, ողջմիտ եւ առողջ դատողութիւններ, արտայայտելու շնորհ «դասական» կատարելութեամբ մը եւ լրջութեամբ մը որ իրապէս պատիւ էր Աղեքսանդրիոյ Ուսանողացին...

...ասիկա փաստ մըն էր թէ կարելի էր հասցնել եռանդուն եւ նուիրուած երիտասարդութիւն մը եւ ազգին «տոկալու եւ տեւելու պայքար» ին լծել զանոնք:

...երկու երիտասարդներուն պէս տարրեր[ու] ... | 13
գոյութիւնը միխթարութիւն մըն է ինծի պէս հին սերունդի պատկանող անձերու, որոնք իրենց ամբողջ կեանքը ազգային մտահոգութիւններով անցուցած են եւ յաճախ յուսախաբութիւններու մատնուած ...գտնելով իրենց դէմ երիտասարդներ...որոնք արհամարհանք ունին բոլոր հայկական իրաց հանդէպ:

Տիգրան Երկաթի հովանիին տակ կազմուած Ուսանողացը թէ կրցած է ձեռք բերել պատուաբեր արդիւնք մը հասցնելով հայ զգացումներով եւ ոգիով հայ երիտասարդներ, ատիկա կ'ենթադրեմ թէ յստակ ջանադրութեան մը եւ երեցներու խնամքին կը պարտի:

Ալպօյաճեանի ակնարկած վարչութեան անդամ երիտասարդը, որ արուեստասեր ասմունքող էր եւ

երգիչ, 1960ի սկիզբը հրաժարելով դրամատան պաշտօնէն միացաւ ներգաղթողներու կարաւանին Մայր Հայաստանին սատարելու իղձով: Միւսը, ատենապետը, արեան ձայնին անսալով հետապնդեց հին, հեռաւոր, նոր ու նորագոյն հայագաղութները ամենօրեայ հայ դպրոցներով եւ հայ կեդրոններով կենսաւորելու եւ վերակենսաւորելու նպատակը: Շրջեցաւ գաղութները ամենուր փոխանցելով Մաշտոցի պատգամն ու հաստատելով փաստը միակ հայրենիքին, որ Սովետական Հայաստանն էր՝ Ամենայն Հայոց Հայրապետութիւն, Գեորգ Չ. եւ Վազգէն Ա. հայրապետներ, Անդրանիկ եւ Յովհաննէս Բաղրամեան, Կոմիտաս եւ Արամ Խաչատուրեան, Հայոց Ցեղասպանութեան Չոհերու Յուշահամալիր, Աղասի Խանճեան եւ Յակոբ (Եակով) Չարոբեան, Անտոն Քոչինեան եւ Կարեն Դեմիրճեան: Մարքս, Էնգելս, Լենին եւ Ստալին աւարտած էին իրենց գործը. Լաւրենտի Փաւլովիչ Բերիան չքացած էր:

Հակառակ որ Հարաւային կողմն աշխարհի քաղաքացիական պայքար բռնկած էր, մայրաքաղաքի մը ոստիկանապետը սպաննուած իր տան անկողնին մէջ հարազատ դստեր նռնակով եւ ցամաքամասի երկիրներ կը ղեկավարուէին բարձրաստիճան զինուորականներով, կարճ թռիչք մը անդին պատուական բարերար ամուլի մը նուիրատուութեամբ եւ կրթական նախարարութեան քաջալերութեամբ նոր հայ դպրոցը բացած էր դռները նորակառոյց շէնքի մը մէջ: Աշակերտութիւնը հպարտութեամբ տողանցեց երկրին եւ Սովետական Հայաստանի դրօշներով: Պետութեան ներկայացուցիչները գոհունակութեամբ

ողջունեցին հոգաբարձութեան ինդրանքով այցելու գործիչին արտասանած ճառը:

*

* *

Տիգրան Երկաթի մուտքին՝ Երկար սեղանի մը վրայ շարուած էին **Արեւ, Յուսաբեր, Արաքս, Սաւառնակ** եւ երբեմն, անկանոն ու պակասաւոր, Պոստոնի «**Պայքար**» օրաթերթն ու Ֆրեզնոյի «**Նոր Օր**» եռօրեան: Երեցները, ազգային դէմքեր, ձեւը գտած էին մեզ ընթերցումի մղելու: Կարդացի՞ր մեր թերթին (**Արեւ**) խմբագրականը: Ձեզմէ հով վայելեց անկախութեան փեշէն կախուած Տոմսը (**Յուսաբեր**): Կը հետեւէր կարծիքի փոխանակումը Նարտի խաղը ընդհատած քաղաքին պանք օթոմանէն հանգստեան կոչուած ութսունամեայ ֆինանսագետին եւ փինկփոնկի սեղանէն պահ մը հեռացած տղոց: Օր մըն ալ այդ պատկառելի դէմքերը շարուեցան մուտքի ձախակողմեան պատին առջեւ կարդալու պատանիներուն «**Պատի Թերթ**»ը:

| 15

Երախտագիտութեամբ պիտի միշտ յիշուի Տիգրան Երկաթ տան ազնուական տիկնանց եւ առաջնորդող այրերուն արտակարգ ուշադրութիւնը պատանիներուն ընդհանուր զարգացման: Այդ տարիներուն եգիպտահայ վարժարանները բարձրագոյն Նախակրթարան էին: Երկրորդական ուսման համար պատանիներ պէտք է յաճախէին օտար կրթարաններ վայելելով նիւթական աջակցութիւնը Տիգրան Եր-

կաթի Վարչութեան, որուն համբաւաւոր «Դեսպաններու Պարահանդէս»ը ապահով աղբիւր էր:

Այդ տղոց եւ աղջկանց նուիրումը ազգին վերադարձաւ տասնապատիկ եթէ ոչ հարիւրապատիկ: Որովհետեւ, ո՛չ միայն հոն, Աղէքսանդրիոյ մէջ իրենց տունը լեցուցին հայ երգ ու պարով, նուագով եւ արտասանութեամբ, թատերական ներկայացումներով եւ դասախօսութիւններով, պարահանդէսներով եւ նուագահանդէսներով, հայ շրջանաւարտից ի պատիւ տարեկան պաղպաղակասեղաններով, որոնք երեցներուն պատգամի բեմն էին, եւ հայ դպրոցներու վերի կարգերուն սահմանուած շարադրութեան մրցանքներով, պարբերական անմոռանալի զբօսապտոյտներով, այլեւ, եւ գլխաւորաբար, երբ հարկադրաբար հեռացան ասպնջական Եգիպտոսի լազուր փոունքներէն, իրենց հետ տարին Տիգրան Երկաթ Դպրոցը Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկա, Գանատա եւ Աւստրալիա:

Ինչ է այդ Դպրոցին մեծ դասը—Ազգային Եկեղեցի, Ազգային Վարժարան եւ Ազգային Ակումբ: ՄԵԿ, միացեալ եւ ամբողջ իրարու հետ: Այս դասէն որեւէ շեղում կը դառնայ **ընկերային ճարտարագիտութիւն**, զոր ամերիկացիք կը կոչեն social engineering: Վերջին քանի մը տարիներուն սփիւռքի կարգ մը համայնքներու եւ Հայաստանի մէջ անկէ մասեր վայելեցինք: Այդ “թերթեւ ճաշի սպասարկութիւնը” լեղի էր եւ վնասակար:

Որո՞ւ մտքէն կ’անցներ որ պատանիի մը համար

բժշկական ինսամֆի նման էական բան մը կամ մարզական խաղերու մէջ այնքան սովորական աղջիկներու եւ տղոց կողմէ արձանագրուած յաջողութիւններ կրնան ծնողներէն գաղտնի եղծանուիլ ուսուցիչներէ, կրթական մարմիններէ եւ բժիշկներէ աներ թողլով մարմիններու վրայ: Իսկարիովտացիին 30 արծաթը ուժի մէջ է...

Այսօրուան խելակորոյս աշխարհը նոր պարտականութիւններ դրած է իր ազգութեամբ հպարտ իւրաքանչիւր հայու ուսին եւ ատոր համար, ՔԵԶ, անմոռանալի Տիգրան Երկաթ, հայը պետք ունի այն տան մէջ զոր Աղեքսանդրիան ընտրեց 120 եւ անելի տարիներ առաջ: Մօրդ արցունքը սրբող ազգայնականներուն պարտականութեան շարքը անվերջանալի էր: Լեզուէն, զէնքէն, դատէն ու պայքարէն անդին պետք է կարճ տաքատով տղաք եւ աղջիկներ Նահապետ Քուչակով բանային քեզ եւ ընտանիքդ յարգող ու մեծարող Զօպանեանի յոբելեանին վարագոյրը իտալական նշանաւոր Օփերաներու հիւրընկալ Մուհամմետ Ալի Թատերասրահին մէջ: Ինչ փոյթ որ երիտասարդ մը պետք զգացած էր վերնայարկէն քննադատական քանի մը բառ արձակելու օրուան գլխաւոր բանախօսին՝ գրագետ, իրաւաբան, հրապարակագիր Ստեփան Շահպազի հասցէին: Աղեքսանդրիան կը մարսէ... որովհետեւ ջամբուած դճաստիարակութիւնը ոսկի հորթին արձանին պաշտամունքը չէր:

Յրաժեշտի այս պահուն Քու պատմական եւ պատուական անուանդ թոյլ տուր որ անելցնեմ քանի

մը հոգի Ակումբին անմոռանալի դաստիարակներէն, որոնք կը կոչուէին Կարապետ Մկրտիչեան, Միհրան Թոգաթլեան, Կայծակ Պօզաճեան, Բենիամին Մամուրեան, Յամբարձում Գարայեան, Էլզի Թիւրապեան, Արաքսի Յովիւեան, Նուարդ Տօթմէճեան: Բոլորը ուղեւորներ հաւատքի, լոյսի եւ տագնապող վասն նորերուն, որոնք հոն են եւ դեռ կրնան գալ ապագայ կոչուած կայտառ երիվարներով:

22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

Ֆորթ Լի, ՆՃ

ԽՕՍՔ ԵՐԿՈՒ ՎԱՍՏԱԿԱԻՈՐՆԵՐԷ

Պարոյր 2. Մասիկեան եգիպտահայ յայտնի իրաւաբան եւ հեղինակ թատերական բազմաթիւ երկերու, որոնցմէ վերջինը՝ ՏԵՂԱՏԱՐԱՓ, լոյս տեսաւ 1962ին Գահիրէ «Արքոս» տպարանէն եւ նախորդներուն նման կը ներկայացնէ համայնքին անդամներուն ընթացիկ մտահոգութիւնները, որոնք հարազատ են Միջին Արեւելքի բոլոր հայ գաղութներուն եւ բնականօրէն ծաղկած հեղինակին նպատակասլաց գրչով:

Մասիկեան երգիծանքի ոյժով կ'ուզէ դաստիարակել մայրերը, ապագայ հարսերն ու փեսաները:

Թերեւս բարեկամներ ուզէին կարդալ 384 էջ հաշուող ՏԵՂԱՏԱՐԱՓ հատորին առաջին էջին մակագրութիւնն ու ստորագրութիւնը.

| 19

ՍԻՐԵԼԻ ՄԻՍԱԷ ՔԻԻԲԷԼԵԱՆԻ (ՅԱՅԿԵՆՅ)

Բանաստեղծ հայ բեմի

Սիրով՝

Պարոյր Մասիկեան

(ստորագրութիւն)

Փրոֆ. Տոբթ. Վահագն Տատրեան

Տնօրէն Զօրեան Հիմնարկի Ցեղասպանութեան
Ուսումնասիրութեանց

Արտասահմանեան անդամ Հայաստանի
Գիտութիւններու Ակադեմիայի

Վաստակաւոր մտաւորական եւ ազգայնական
գործիչ Մ. Հայկենցին

Լաւագոյն մաղթանքներով՝ Վահագն Տատրեան

20 |

7 Դեկտեմբեր 2005

ԱՎՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՍԻՆ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՁ

14 ՆՈՅԵՄԲԵՐ 2003

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ. ԱՐԺԱՆԹԻՆ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԻՐԱՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԸ ԿԵԱՆՔԷՆ

ՊԵՏՐՈՍ ՓԻԱՆՏԱՐԵԱՆ

Տիգրան Երկաթի հնոցին բաղադրիչ տարրերը իր Ուսանողաց Մարմնի անդամներն էին. որոնք Աղեքսանդրիոյ Պողոսեան Ազգային Եւ Հայկազեան անհատական վարժարաններէն շրջանաւարտ ըլլալէ ետք իբրեւ Տիգրան Երկաթի սան երկրորդական ուսումը շարունակած են քաղաքին ֆրանսական կամ անգլիական կրթարաններուն մէջ: Քիչեր կը յաճախէին Տոն Պոսթօ արհեստից յայտնի դպրոցը:

Առաջին օրէն Տիգրան Երկաթը զարկ տուած է լսարանական դաստիարակութեան: Մասնագէտներ հերթով դասախօսած են հայոց լեզու, երբեմն գրաբար, ֆրանսերէն, Անգլերէն, Արաբերէն նաեւ միջազգային օրէնսդրութիւն: Այդ հնոցին մէջ կոփուեցաւ նորերուն նկարագիրն ու միտքը հարստացաւ գիտելիքներով: Անոնցմէ Էր Հայկեց, որ 18 տարեկանին ազգային վարժարանի աշակերտութեան, իր

երբեմնի դասընկերներուն, հմտութեամբ սորվեցուց հայերէն լեզու եւ հայոց պատմութիւն:

Յաճախ ինք էր գլխաւոր բանախօսը հանդիսաւոր առիթներով կազմակերպուած ձեռնարկներուն: Եղաւ ժամանակ երբ Տիգրան Երկաթ կը յորդեր աշակերտութեամբ: Սիալ պիտի չըլլար հաստատել որ աշակերտները կը հետեւէին իրենց ուսուցիչին:

1963ին Միացեալ Նահանգներ իր մեկնումը տխուր անակնկալ մը եղաւ բարեկամներուն եւ հանրութեան: Շուտով պարզուեցաւ որ առաքելութիւնը Պոստոն հաստատուիլ էր, բայց պատասխանատու մարմիններ զինք կարգած էին ֆրեզնօ լոյս տեսնող **ՆՈՐ ՕՐ ԵՌՈՐԵԱՅ** պաշտօնաթերթին խմբագրապետ եւ **ՌԱԿ Գալիֆորնիոյ** շրջանի գործիչ: Կ'արժէ յիշել որ **ՌԱԿ**-ի պարագային հին սերունդէն գործիչ տիտղոսը արժանապէս կրած եւ արդարացուցած են Հրաչ Երուանդ, Յովհաննէս Պօղոսեան եւ Անդրանիկ Անդրեասեան:

Շուտով պարզուած էր որ Լոս Անճելըս քաղաքը իր շրջակայ ոստաններով յոյժ գրաւիչ բնակավայր-աշխատավայր մըն է ներգաղթող հայութեան համար: 1964 ապրիլին Նոր Օր ունեցաւ իր Նոր տունը Լոս Անճելըսի Փիքօ Պուլըվարտին վրայ: Հոն հաստատուեցաւ թերթը ֆրեզնոյէն տարագրուած տպարանական ոչ նախանձեղի կազմաձևերով եւ առանց գրաշարի: Անշուշտ դժուարութիւնները շատ էին բայց թերթը լոյս տեսաւ երբեմն կաղալով: Գոհունակութիւն յայտնողները բազմաթիւ էին. անոնցմէ էր տիկին Վըրճինիա

Մամուլեանը, մայրը Ռուբեն Մամուլեանի, որ հանգուցեալ հօր լուսանկարը անձամբ խմբագրատուն բերաւ:

Յ.Բ.Ը. Միութեան Նախագահ Ալեք Մանուկեան Տիրոջիթեն շատ մօտէն կը հետեւէր հայ կեանքին եւ բոլոր թերթերուն: Առաւօտ մը հեռաձայնած էր Նոր Օր, յայտնած էր որ Լոս Անճելըս կը գտնուէր Ուիշըր Պուլըվարտի վրայ յայտնի պանդոկ մը եւ կը փափաքէր այդ առաւօտ տեսնել խմբագիր Յայկենցը, որ կէս գիշերին խմբագրատուն գացած էր թերթին յաջորդօրուան *կելիները* կապելու: Խմբագիրը յարգած էր նախագահին կամքը:

Յանդիպման՝ նախագահը պարգած էր, տեղ-տեղ յուզումնախառն, իր դժուարութիւնները ազգային յարաճուն խնդիրներու կապակցութեամբ նաեւ տարիքի բերմամբ չկարենալ անհրաժեշտ կերպով զբաղիլը, ապա խնդրած որ ան Տիրոջիթ երթար, միանար Մասթօ Ընկերութեան անձնակազմին, ըլլար իր խորհրդականն ու գործակիցը եւ յարաբերաբար շուտով ստանձներ Բարեգործականի Ընդհանուր Տնօրէնի պաշտօնը:

| 23

Տարին՝ 1966: Նախագահը զգալով խմբագրին տատամսումը խնդրած էր զինք չմերժել: Տիար Նախագահ, ըսած էր ան, ես Ռամկավար Ազատական Կուսակցութեան զինուորն եմ, պարտականութիւններ ունիմ: Որպէսզի ձեր փափաքին ընդառաջեմ, դուք պետք է ձեռք բերէք Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնը:

Ահա՛ մարդը, որ նախախնամութեան կարգադրութեամբ յաջորդեց երկու պատկառելի դէմքերուն՝ երջանկայիշատակ հիմնադիր-նախագահին՝ Պօղոս Նուպարի աներկիւղ աջակից, ազգային գործիչ եւ բանաստեղծ Վահան Մալեգեանի եւ կրթական մշակ, հայկաբան եւ թարգմանիչ Գրիգոր Կիրակոսեանի: Հայկենց եղաւ երրորդ եւ վերջին Ընդհանուր Տնօրէնը մեր պանծալի Միութեան: Հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք իր վաստակը ընդգրկեց ազդու խանդավառութեան եւ յատկապէս կրթական-կազմակերպչական մեծ իրագործումներու տասնըհինգ տարիներ: Մէկ խօսքով՝ 1970-1985 եւ ցայսօր հինով նորն ու նորագոյնը ապրեցնող մարդը եղաւ ան ազգաշինութեան դաշտին մէջ:

Ծանոթութիւն

Պետրոս Փիանտարեան 2022 Էն աշխատեցաւ Տիգրան Երկաթի 120 ամեակը նշելու հիւսիսային Ամերիկայի մէջ համակարգիչի **2ուսմ**-ով: Կապ հաստատեց նախկին եգիպտահայ բարեկամներու հետ: Դժբախտաբար անակնկալօրէն աչքերը փակեց 2024ի Յունիս 5-ին: 93 տարեկան էր: Մահը կը սգան կինը՝ Էնն Փիանտարեան, դուստրերը՝ Էլիզաբէթ Փիանտարեան Պրայըն, Ալիսըն Փիանտարեան, հին ընկերներ եւ բարեկամներ:

Ուսանողաց մարմնի ընտրովի վարչականներ եւ գործօն անդամներ

1950-1970

| 25

Տիգրան Երկաթի դասախօսութեանց սրահը օրուան ատենապետ Վահան Ալեքսանեանի հօր յիշատակին կոչուեցաւ «Տիգրան Ալեքսանեան»: Մկրտիչ Նալպանտեան, Պետրոս Փիանտարեան, Անդրանիկ Չատրճեան, Արթօ Յամբարձումեան, Պերճ Յամբարձումեան, Գոհարիկ Էսերեան, Տոյինէ Փալանճեան, Բարսեղ Գարթալեան, Արշալիր Կեօնճեան, Մեսրոպ Քիւրէլեան, Պարգէլ Մազլումեան, Նուպար Մամուրեան, Վարդգէս Քէշիշեան, Յրայր Սարգիսեան, Կարպիս Նաճարեան, Արա Մուշիկեան, Գրիգոր Մանճրլըքեան, Ալիս Կեօնճեան, Գեորգ Փիլիկեան:

Անոնցմէ քանի մը հոգի 1963ին միացան Յայաս-

տան մեկնող կարաւանին, ոմանք գաղթեցին Աւստրալիա, Գանատա եւ Միացեալ Նահանգներ:

Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութեան Աղէքսանդրիոյ Նէպի Տանիւի Փողոցին վրայ գտնուող պալատանման կեդրոնին քարտուղարն էր գրող եւ թերթերու աշխատակից Վաղինակ Աբգարեանը: Երեցները իրմէ ինդրած էին որ Դանիւի Վարուժանի մասին խօսէր: Որոշուած օրը անոնք գրաւած էին «Տիգրան Աղէքսանեան» սրահը:

Աբգարեան արտասանեց հետեւեալ երեք քերթուածները Վարուժանի «ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ» հատորէն: Ներկայ դասաւորումով այդ քերթուածներէն կը բացակային քանի մը քառեակներ:

26 |

Ո՛Ր ՏԱԼԻԹԱ

Կարմրաշառայլ լոյսերուն մէջ կը վառի

Կապելադ, ո՛ր Տալիթա:

Բէր գարեջուրն եւ թող փրփուրն հոսանուտ

Մատերդ ի վար պըղպըջայ:

Ինչ փոյթ թէ ես ազնւական կը թուիմ,

Ունիմ ձեռքեր քընքշենի.

Եւ ինչ փոյթ թէ դուն աղջիկ մ'ես ջըլէբաց՝

Որ բանուորներ կ'ընդունի:

Կ'ատեմ կիներն՝ որոնք դիմացն հայլիին
Դիմաներկեր կը շաղուեն.
Կը ծըծցընեն Ծերակոյտի անդամներ
Տոփանքներով տարօրէն:

Դահլիճներուն փարթամ կիները կ'ատեմ.—
Իրենց կաւատն Է՝ ոսկին.
Չիրենք սիրողը կը սպառեն, եւ իրենք
Տան շընիկէն կը սպառին:

Բէր, Տալիթան, բէր գարեջուրն, ու նըստէ
Ծունկիս վրայ՝ թոյլ տալով
Որ աղախնի կարճ քըղանցքէդ երեւնան
Բումբերըդ՝ սեւ գուլպայով:

| 27

.....
Այսօր կ'ուզեմ դահլիճին մէջ ծաղրըւած
Սէրս առջեւըդ պղծել,
Խաբուած հոգիս բերել ուամիկ աղջըկան
Գարեջուրով մը ծախել:

ԲԱՆՈՒՐՈՒՅԻՆ

Պատուհանիս տակեն, ամեն առաւօտ,

Ուրուականի պէս կ'անցնիս.

Եւ կուսագեղ գըլուխիդ վրայ կ'արտասուէ

Տերեւաթափ վարդենիս:

Լուռ թաղին մէջ կը լըսեմ քայլդ, ու զարթնող

Շունն՝ որ վըրադ կը հաջէ.

Կամ կը լըսեմ քունիս մէջէն ձայնն հազիդ՝

Որ ծոցդ աղուոր կը տանջէ:

28 |

Եւ կը խորհիմ թէ քընատ ես եւ նօթի.

Իրանդ հովէն կը դողայ.

Եւ կը նըստի գանգուրներուդ վըրայ, քնյր,

Եղեամն իբրեւ շափիւղայ,

Կամ մուճակներդ են պատըռտած, փողոցին

Ջուրն անոնց մէջ կը ճողփայ.

Կամ ետեւէդ շըւայտօրէն կը սուլէ

Թուրք սըրիկայ մ'անոպայ:

Եւ կը խորհիմ թէ, տան մէջ, մայրդ է հիւանդ.

Յամբած է ձեռն ալ ճրագին.

Ու դուն կ'երթաս գործատան մէջ աշխատիլ

Լոյսին համար ու կեանքին:

Ես կը խորհիմ — եւ խենթի պէս կը բաղձամ

Վար իջնել, քոյր դալկադէմ,

Քովըդ իջնել, համբուրել ձեռքըդ նիհար,

Եւ հըծծել.— «Քեզ կը սիրեմ»: —

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,

| 29

Կը սիրեմ կուրծքըդ քանդուած՝

Որուն մէջ դեռ կը յամառի Սէրդ երգել

Արտոյտի պէս սըրարբած:

.....

Կ'ուզեմ քեզ տալ ինչ որ պայթարն ինձ տըլաւ,

Ինչ որ խլեցի մարտերով.

Քեզ պըսակել արիւնիս գոյնն ունեցող

Յաղթանակիս վարդերով:

Միայն թե դուն չըլլաս տըժգոյն ու քաղցած,
Արեւուն տակ չըհագաս,
Մօրըդ վերեւ չըմարի ճրագն, ու, ո՛վ քոյր,
Դուն գործատուն ա՛լ չերթաս:

* * *

ՎԱՐՈՒԺՆԱԿԻՍ

Աղուն՛ր, աղուն՛ր, աղուն՛ր վարդն իմ Գարունիս՝
Որ սըրտիս վրայ բացուեցար,
Եւ քեզի հետ բացիր հոգիս վըշտահեղձ
Նոր երագի մը պայծառ:

30 |

Հին օրօրանն, որ, թաղարի պէս լըքուած,
Կ'ըլլար խըշտեակը սարդին,
Կենդանացա՛ն ճըռուողիւնով, բոյնի պէս
Պաճուճուեցաւ վերըստին:

Արեւ մը նոր, շողերուն հետ աչքերուդ,
Շեմիս վըրայ ցաթեցաւ.
Եւ վանդակին մէջ կաքաւս իմ վիրաւոր
Կարկաջեց երգ մը անձկաւ:

Դուն սենեակէ սենեակ թըռար դեդեւուն

Բոյնէն ինկած ծիտի պէս.

Ձայնէդ դիւթուած՝ այցելեցին տընակիս

Սերովբէներ լուսագէս:

Աղուհր, աղուհր, աղուհր վարդն իմ Գարունիս,

Եկուր նըստէ ծունկերուս.

Թող լուսնակի պէս՝ մըռայլ ծոցս ողողեն

Ոսկի վարսերըդ սընդուս:

Շըղթայն վիզս այդ թեւերովդ քընթոյշ

| 31

Նըման ծաղկէ մանեակի.

ժըպտէ ինծի, որ ցուրտ անդունդը սըրտիս

Արշալոյսն՝ վ բըռընկի:

Խօսէ ինծի, անձանօթ խօսքը, զոր դուն

Երկինքէն հետըդ բերիր, —

Կը բանայ շողը՝ վարդն, իսկ շուրթը մանկան՝

Աստուծոյ մատը կարմիր:

.....

Քու ձեռքը լոկ դեռ կը բռնե գիս կանգուն

Աւազներուն վրայ փառքիս.

Եւ մազիդ մէկ թելը բաւ է կապելու

Տիեզերքին հետ՝ հոգիս:

Վարուժնակդ իմ, իմ փափկասուն Դիցուհիս,

Ո՛վ քնարե դու հոգեակ,

Թող որ արցունքս, որ այտերուդ վրայ կ'իյնայ,

Ըլլայ ծիծաղ կամ սուտակ.

.....

32 |

Չի ես անդրևնդն եմ՝ որ կ'ըլլայ երջանիկ

Փոսուռայի մը լոյսով.

Անապատն եմ, որ երկինքին կը ժըպտի

Իր ծըլարծակ մէկ բոյսով:

ԽՈՅԱՆՔ, ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՐԹՈՒԹԵԱՆ ԱՐԻՒՆԱԹԱԹԱԽ ՏԱՐԻՆԵՐ

Մ. ՀԱՅԿԵԼՑ

Ամառը վայրագ աղմուկով աշուն կը փնտռեր երբ մասնատուած գրադարանես անակնկալ երեւցաւ **Առաքել Ն. Պատրիկի Դանիել Վարուժանն իմ Յուշերում** գիրքը հրատարակուած Մշակ տպարանէն 1968ին, Պէյրուզ:

Անհամբեր կը դարձնեմ կողքի էջը ուր զիս կ'ողջունէ Շիքալօ բնակող սեբաստացի բարերար ամուլի մը ձեռագիրը—**Սիրելի եւ յարգելի Միսաք Հայկենց. Յիշատակ մեր կողմէ: Տեր եւ Տիկին Օսկար Իսպիրեան 1969 27 Ապրիլ, Շիքալօ:** Կը մտածեմ որ այդ քաղաքին քաջածանօթ մեր պատուական ընկերներէն եւ առաջնորդներէն ՕՆՆԻԿ եւ Պետրոս Նորիատ եղբայրները գուցէ տեղեկացուցած ըլլան

ազնիւ ամուլին Գալիֆորնիոյ շրջանի նորեկ երիտա-
սարդ գործիչ-խմբագրին մասին:

Գիրքը ունի քանի մը շատ հետաքրքրական լուսանկարներ որոնցմէ մին Սեբաստիոյ Արամեան վարժարանի ուսուցչական կազմը՝ թիւով 20, տեսուչ Շաւարշ Ծ. Վրդ. Սահակեանի հետ: Անոնց մէջ է նաեւ Դանիէլ Վարուժանի դասընկեր Գրիգոր Կիրակոսեան, որ արտասահմանի մէջ երկար տարիներ ծառայեց հայ դպրոցին, վարեց Յ.Բ.Ը. Միութեան Ընդհանուր Տնօրէնութիւնը Նիւ Եորքի մէջ: Ան անգլերէնէ հայերէնի թարգմանած էր եւ Գահիրէի **Արեւ** օրաթերթին մէջ հրատարակած Պենկալ ծագումով Բապինտրանադ Թակորի **Gitanjali** գործը որ արժանացած էր 1913 տարուան գրականութեան նոպելեան մրցանակին:

34 |

Ուրախութեան եւ հպարտութեան առիթ մըն էր դիտել Դանիէլ Վարուժանի պրոնզեայ յուշատախտակին նկարը Կանտ համալսարանի մատենադարանի դահլիճին մէջ, 1958:

Բուն անունով Դանիէլ Չպուքեարեան, ան ծնած է Սեբաստիոյ Բրզնիկ գիւղը Ապրիլ 20 1884ին: 1905ին կ'ընտրէ Դանիէլ Վարուժան գրական անունը: Մայրը՝ Թագուհի, եղբայրներէն երկուքը՝ Պետրոս եւ Արշակ կը զոհուին տարագրութեան, հայրը որ երկար տարիներ Պոլսոյ մէջ մաքսային գործով զբաղած է, նահատակուած է Սեբաստիա:

Պելճիքայի համալսարանին դասախօսներուն եւ Հայ ազգային վարժարանին մէջ ապրող Սուրբ

Մեսրոպին հետ ուրիշ նահատակ հսկայ մըն ալ երգած է իր հիացումը, սերն ու յարգանքը փոքրահասակ հսկային: **Վարուժանը իբրեւ հզօր արուեստագետ բանաստեղծ մը հալած կապարով կը գրէ ոսկի գանգիւններ հանելու համար ... ժողովուրդի մը վերքերը կը դիտէ Կիլիկիայեան աչքով, տառապանքին մէջ ու տառապանքէն վեր միանգամայն... Վարուժանի մէջ, այդ հոյակապ տոհմիկ բանաստեղծին մէջ միակ նախապաշարումը կեանքն է, արեւալիր կայծակ-նաշող պայթարը...այն ժողովուրդին, որուն զաւակն է ինքը, այն ժողովուրդին, որ բոլոր անցքերուն, բոլոր հեղեղներուն, բոլոր մրրիկներուն դիմակալեց կեանքին ու լոյսին հաւատքով:**

ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱՊ

| 35

Տրամադրութեանս տակ գտնուող գիրքերէն կամ գրութիւններէն ոչ մէկը անդրադարձած էր բանաստեղծին մահուան պարագաներուն: Միշտ խորհած էի որ **Նահատակ Գրողներ** շարքին մէջ թերեւս գտնուի օրինակ մը:

Շուրջ ամիս մը առաջ Դոկտ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան տեղեկացուց որ Հայաստան ներգաղթած սեբաստացի գրող Առաքել Պատրիկի անցեալին հրատարակած Բ. Հատորը կը հաստատէ որ 1914 ին Դանիէլ Վարուժան գացած է Պոլիս եւ բազմաթիւ ուրիշներու հետ 1915 ին աքսորուած Չանղըրը:

Մեծանուն բանաստեղծը փայլուն ուսանող մը եղած է: 2006ին Իսթանպուլ հրատարակուած անոր «Յեթանոս Երգեր» գրքին նախաբանին մէջ կը յիշուին յաճախած վարժարանները— Սագըզ Աղաճի Մխիթարեան դպրոց, Գատըզիւղի վարժարան, Վենետիկի Սուրատ Ռափայէլեան վարժարան (1902–1905) եւ Պելճիբայի Կանտ համալսարան, ուր ուսանած է չորս տարի (1905–1909): Հայրենի երկիր վերադառնալով Սեբաստիոյ Արամեան վարժարանին մէջ նուիրուած է նոր սերունդին դաստիարակութեան բացառիկ նուիրումով: Խօսուն են աշակերտ եւ յուշագիր Առաքել Պատրիկի հաղորդումները: Սիրուած եւ մեծապէս գնահատուած Բանաստեղծը Առաքելին համար գտած է մտերմական անուն մը՝ «Առօ»:

36 | 1958ին Կանտ համալսարանին մէջ Վարուժանի նուիրուած յուշահանդէսին իր վաղեմի դասընկերը՝ Բիւռ Մայես յիսուն տարուան հեռաւորութենէն կը նկարագրէ իր բարեկամը եւ կուտայ անկէ ստացած մտերիմ նամակի մը բովանդակութիւնը:

«Սիրելի Բիւռ, 1910ին ամուսնացայ եւ երկու տարիէ ի վեր ընտանիք կազմած եմ: Կինս կը կոչուի Արաքսի, խարտեաշ գեղեցկուհի մը, զոր կը սիրեմ ռոմանդիկ սիրով: Ունիմ նաեւ աղջնակ մը որ մէկ տարեկան է, օժտուած կանխահաս իմացականութեամբ: Արդէն ան գիտէ «հայրիկ» կոչել անբացատրելի ուրախութեամբ համակելով զիս: Իրեն նուիրած եմ բանաստեղծութիւն մը «Վարուժնակիս» խորագրով, որ անունն է իմ պաշտելի հրեշտակին»:

Ահա այդ բերթուածին առաջին քառեակը ընթեր-
ցողին եւ մեր բիւռներուն համար:

Աղուհր, աղուհր, աղուհր վարդն իմ Գարունիս՝

Որ սըրտիս վրայ բացուեցար,

Եւ քեզի հետ բացիր հոգիս վըշտահեղծ

Նոր երազի մը պայծառ:

Գիրքին հեղինակ Առաքել Պատրիկ կը յայտնէ որ
առաջին անգամ ընդհանուր զօրահաւաք Նշանակող
«Սեֆերը-Պիրլիկ» բառը լսած են 1914 Յուլիս 22ին:
Իրենց զինուորական ծառայութեան տարիքին բեր-
մամբ ենթասպայ պատրաստուելու համար քանի մը | 37
ընկերներով կ'արտօնուին Պոլիս երթալ պատերազ-
մական վարժարանին մէջ մարզուելու:

Պատերազմը բորբոքած էր Տարտանել եւ Չանազ
Գալէ: Խուճփին միւս անդամները կը ղրկուին
զանազան մարզարաններ եւ հեղինակը այլեւս անոնց
մասին տեղեկութիւն չ'ունենար: Ան յաջողած էր Պոլսոյ
քարափը հասնելէ ետք փախչիլ եւ գիշերելու խուց մը
ճարել: Իր բախտէն Նոյն խուցին փեղկէն կը տեսնէ իր
սիրելի ուսուցիչին՝ Դանիել Վարուժանի գլուխը:

Յակառակ որ փախստական եւ վտանգուած
զինուոր մըն էր իր աշակերտը եւ տիրող միջավայրն ալ
սոսկալի, բանաստեղծը քաջութեամբ եւ ջերմութեամբ
կ'ընդունի Առօն, իսկ տիկին Արաքսին կը հիւրասիրէ

զինք համեղ ձուկէ պատրաստուած ընթրիքով մը մինչ երկու երախաները՝ Վերոնիքան եւ Արմենը կը ծաղկեցնէին իրենց հօր դէմքը:

Չանդըրիի մէջ մեծ բանաստեղծը, բժիշկ Ռուբէն Սեւակը եւ քանի մը ուրիշ աքսորեալ հայեր վարձած էին Իպրահիմ անունով կրօնափոխ հայու մը շէնքը: Առօն յաջողած էր անկէ քաղել մեր անգտանելի հարազատներուն ենթարկուած չարչարանքին մանրամասնութիւնները:

Վերջաբան հին եւ նոր ապրումներով:

38 | Իպրահիմ յայտնած է որ տոքդ. Սեւակ կրնար փրկուիլ եւ փեսայանալ, որովհետեւ փրկած էր ազդեցիկ թուրքի մը աղջկան կեանքը, բայց Սեւակ մերժած էր աղջկան հօր առաջարկը:

Ռուբէն Սեւակ ամուսնացած էր գերմանուհիի մը հետ. զաւակներ ունէին: Կինը խստիւ դատապարտած էր Գերմանիան եւ Գերմանիոյ դեսպանը, նոյնիսկ յայտարարելով որ իր փոքր զաւակները պիտի մղէր վրէժ լուծելու Գերմանիայէն:

Երբ հարազատ մը կեանքին հրաժեշտ տայ,
սովորութիւն դարձած է գոյժը հաղորդելու հետ ըսել՝
հանգուցեալը «աչքերը փակեց»:

Մեծ Եղեռնը հայ ազգէն իլեց միլիոնաւոր
հարազատներ:

Տարին անգամ մը գոնէ հարց տանք Հայր
Աստուծոյ —

Տէր, ինչ եղան 31 տարեկան փոքրահասակ,
կենսասէր եւ քաջարի մեծ բանաստեղծին սեւ
աչքերը:

Տէր, ո՞ր են երկու հարազատներուն՝ Չօհրապի եւ
Վարդգէս Սերենկիւլեանի ոսկորները:

| 39

Տէր, խաւար դարերու հոլովոյթին մէջ հայը
փաթաթած է սեւագոյնը չորս թիւերով՝ **1915**, բայց
կ'ապրի յարուցեալ մէկ հատիկիդ օրհնութեամբ եւ
օգնութեամբ:

ՏԵՐ, ԿԵՑՈ՛Ղ ՌՈՒ ՉՀԱՅՍ:

